

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՏԱԹԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ 2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Մշակվել է՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի կողմից

Ներկայացվել է՝ համայնքի ղեկավար Սամվել Լալայանի կողմից

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2022 թ մարտի 15-ի թիվ 10-Ա որոշմամբ

Տաթև համայնք

2022թ.

Բ ն վ ա ն դ ա կ ու թ յ ու ն

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔԸ.....	3
ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ.....	5
ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ.....	15
ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐ.....	22
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....	24
ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ.....	26
ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ.....	28
ՀԶԾ-Ի ՖԻՆԱՆՍԱՎՈՐՈՒՄ.....	50
ՀԶԾ-Ի ՄՈՆԻԹՈՐԻՆԳ.....	50

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՈՂՋՈՒՅՆԻ ԽՈՍՔ

Հարգելի՛ համայնքաբնակներ,

ՀՀ Սյունիքի մարզի Տաթև համայնքի 2022-2026թթ. հնգամյա զարգացման ծրագրի նպատակն է սահմանել համայնքի զարգացման տեսլականը, ամենօրյա աշխատանքով, նորարար գաղափարներով հասնել դրա իրագործմանը: Համայնքի զարգացման տեսլականի հիմքում բնակչի կյանքի որակի բարելավումն է, անհրաժեշտ պայմանների ստեղծումն ու ապահովումը:

Այս փաստաթուղթն է հիմք հանդիսանալու առաջիկա բազմաթիվ նախաձեռնությունների, կոնկրետ իրագործելի ծրագրերի, տարեկան համայնքային բյուջեների, տարեկան աշխատանքային պլանների կազմման համար, նաև՝ դառնալու համայնքային ներկա իշխանության աշխատանքի արդյունքների գնահատման օրինակելի չափման միավորը:

Տաթև համայնքի 2022-2026թթ. զարգացման ծրագիրը մշակելիս հաշվի են առնվել սահմանադրական և օրենսդրական փոփոխություններով պայմանավորված հրամայականները:

Ներկայացվող ՀԶԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Տաթև համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: ՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է համայնքի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ: ՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել համայնքի հանրային ծառայությունների մատչելիության և հասանելիության, նոր ծառայությունների մատուցման և դրանցով պայմանավորված լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները: ՀԶԾ-ն մշակելիս որպես կողմնորոշիչ են դիտարկվել համայնքի զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսման առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ զբոսաշրջության, փոքր և միջին բիզնեսի և այլնի) հնարավորությունները, արդյունավետ կառավարման իրականացումը: Վերհանված հիմնախնդիրների հիման վրա, ելնելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի պահանջներից, համայնքի ղեկավարը՝ համայնքապետարանի աշխատակազմի և Տաթև համայնքի ավագանու հետ միասին մշակել է համայնքի 2022-2026թթ. ՀԶԾ-ն, որը քննարկվել և հաստատվել է համայնքի ավագանու կողմից և դրվել է գործողության մեջ:

Համայնքի 2022-2026թթ. ՀԶԾ-ում ներառված են Տաթև համայնքի հետագա զարգացումը ուղենշող համալիր միջոցառումներ, որում ընդգրկված են նաև դրույթներ իմ նախընտրական ծրագրերի բաղադրիչներից: Այն Տաթև համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման,

բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիր է, որը հանդիսանալու է համայնքապետարանի գործունեության ուղեցույցը:

Փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձվել նրա ներդաշնակեցմանը ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածի կազմակերպությունների հետ լիակատար համագործակցություն՝ խթանելով մեր երկրի և համայնքի կայուն զարգացումը տվյալ ծրագրերի հետևողական իրականացման արդյունքում:

Տաթև համայնքի ղեկավար՝

Սամվել Լալայան

1. ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1.1 Համայնքի ընդհանուր բնութագիրը

Տաթև բազմաբնակավայր համայնքը ձևավորվել է նախկին Շինուհայր, Տաթև, Խոտ, Հարժիս, Հալիձոր, Սվարանց, Տանձատափ, Քաշունի համայնքների միավորումից՝ ՀՀ Ազգային ժողովի կողմից 2015 թվականի նոյեմբերի 24-ին ընդունած «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի համաձայն:

Համայնքի կենտոնի՝ Շինուհայրի հեռավորությունը մայրաքաղաքից կազմում է 235 կմ, մարզկենտրոնից՝ 81 կմ, իսկ Երեվան-Մեղրի մայրուղուց՝ 7 կմ: Մինչբնակավայրային ճանապարհներով իրար հետ կապված են Տաթև համայնքի բոլոր բնակավայրերը (աղյուսակ 1): Տաթև համայնքը միջհամայնքային ճանապարհներով կապված է Որոտան, Բարձրավան, Աղվանի, Լձեն (Սիսիանի շրջան), Նորավան (Սիսիանի շրջան), Գորիս և Քարահունջ համայնքների հետ:

Աղյուսակ 1. Համայնքի կազմի մեջ մտնող բնակավայրերի հեռավորությունը համայնքի կենտրոնից և բարձրությունը ծովի մակերևույթից

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Բնակավայրի հեռավորությունը համայնքի կենտրոնից	Բնակավայրի բարձրությունը ծովի մակերևույթից
1.	Շինուհայր	-	1450 մ
2.	Տաթև	19 կմ	1610 մ
3.	Խոտ	2.5 կմ	1450 մ
4.	Հարժիս	18 կմ	1700 մ
5.	Հալիձոր	4.5 կմ	1250 մ
6.	Սվարանց	22 կմ	1700 մ
7.	Տանձատափ	23 կմ	1400 մ
8.	Քաշունի	28 կմ	1500 մ

Տաթև համայնքի տարածքը հյուսիսից դեպի հարավ-արևելք ձգվում է եռաբլրի սարահարթից և տարածվում դեպի Որոտան գետի անդնդախոր ձորը, ձորով շարունակվում դեպի հարավ-արևմուտք: Հարավարևելյան ու հարավային մասում գետի աջ ափի այգիներից վեր, ձորալանջին փոված թփուտային տարածություններն են՝ սահմանակից խիտ անտառին:

Տաթև համայնքի վարչական տարածքում են գտնվում Տաթևեր ճոպանուղին (գ.Հալիձոր, գ.Տաթև), Սատանայի կամուրջը (գ.Տաթև), Տաթևի վանական համալիրը (գ.Տաթև): Համայնքի

տարածքում գտնվում է չօգտագործվող օդանավակայան (գ.Խոտ): Համայնքի տարածքում գտնվում է խոշոր էլեկտրական ենթակայան (Շինուհայրի ենթակայանը): Ձորի մեջ առկա է 2 հատ փոքր հզորության էլեկտրակայան, որոնք ձգվում են դեպի հարավ՝ դարձյալ Որոտանի ձորը՝ «Զուվարի» այգիները, իսկ էլեկտրակայաններից դեպի հյուսիս սահմանագիծը հանդիսանում է Գորիս տանող ճանապարհը:

Համայնքն ունի շատ կտրտվածության դաշտեր, բլուրներ, ձորեր, ձորակներ, լեռներ, անհարթ տարածություններ: Ցածրագույն կետը Որոտանի ափն է՝ 800-900 մետր բարձրությամբ, բարձրագույն կետը՝ Եռաբլրի սարավանջում հասնում է 2000-2100 մետրի: Համայնքից երևում է գեղեցիկ բնապատկեր. արևմտյան կողմում Զանգեզուրի լեռնաշղթայի մի մասն է՝ Արամազդ գագաթով (3392մ), հարավային կողմում՝ Բարգուշատի անտառապատ մասը: Արևելյան կողմում հեռվում երևում է Արցախի լեռնաշղթայի մի մասը:

Բնակլիմայական պայմանները փոփոխական են և ոչ բարենպաստ գյուղատնտեսության համար: Դաշտերը հիմնականում ոռոգովի չեն և բերքատվությունը մեծ կախում ունի տարվա տեղումներից: Ձմեռը ցուրտ է, բքաշունչ: Ամառը զով է, երբեմն էլ շոգ ու երաշտ: Ձորում գարունը շուտ է բացվում, աշունը ուշ վերջանում: Ձնածածկույթը Եռաբլրի տարածքում տևական է լինում, ուղեկցվում բքի վերածվող ուժեղ քամիներով: Երբեմն փակվում են ճանապարհները, դադարում է երթևեկությունը: Գարնանը լինում են տեղատարափ անձրևներ: Տարվա մեծ մասը մառախուղը Որոտանի ձորի անբաժան ընկերակիցն է: Համայնքը հարուստ է տարածքում գտնվող տարբեր ժամանակներին կառուցված պատմամշակութային հուշարձաններով: Դրանցից որպես խոշորներ առանձնանում են «Տաթևի Անապատը» (գ. Տաթև) և «Հալիձորի Հարանց Մեծ Անապատը» (գ. Հալիձոր):

Ստորև ներկայացվում է համառոտ տեղեկատվություն համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի մասին.

1. **Շինուհայրը** հանդիսանում է Սյունիքի մարզի ամենամեծ բնակավայրը, տարածքը կազմում է 5245,1 հա: Բարձրությունը ծովի մակարդակից 1450 մ է, հեռավորությունը մայրաքաղաքից՝ 235 կմ է, մարզկենտրոնից՝ 81 կմ: Բնակավայրում առկա է 10 բազմաբնակարան բնակելի շենք՝ 3 հարկանի (յուրաքանչյուր շենքում 18 բնակարան), 510 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 2579 ,որից՝ 1326 արական, 1253 իգական սեռի, աշխատանք փնտրող քաղաքացիների թիվը՝ 544 /կին՝ 243/, 1369 զբաղվածներ՝ այդ թվում նաև գյուղատնտեսությամբ:

2. **Տաթև** բնակավայրի տարածքը կազմում է 7627,12 հա: Բարձրությունը ծովի մակարդակից 1610 մ է, հեռավորությունը մայրաքաղաքից՝ 253 կմ է, մարզկենտրոնից՝ 50 կմ, համայնքի կենտրոնից 19 կմ: Բնակավայրում առկա է 2 բազմաբնակարան բնակելի շենք՝ 2 հարկանի (մի շենքում 2 բնակարան, մյուսում՝ 4), 220 առանձնատուն: : Բնակչության թիվը՝ 814 ,որից՝ 415 արական, 399 իգական սեռի, աշխատանք փնտրող քաղաքացիների թիվը 280 /կին՝ 130 /, գրանցված գործազուրկներ՝ չկան:
3. **Խոտ** բնակավայրի տարածքը կազմում է 1795,19 հա: Բարձրությունը ծովի մակարդակից 1450 մ է, հեռավորությունը մայրաքաղաքից՝ 237 կմ է, մարզկենտրոնից՝ 69 կմ, համայնքի կենտրոնից՝ 2,5կմ: Բնակավայրում առկա է 1 բազմաբնակարան բնակելի շենք՝ 2 հարկանի (շենքում 4 բնակարան), 172 առանձնատուն: : Բնակչության թիվը՝ 919, որից՝ 484 արական, 435 իգական սեռի, աշխատանք փնտրող քաղաքացիների թիվը՝ 136 /կին՝ 62/, գրանցված գործազուրկներ չկան:
4. **Հարժիս** բնակավայրի տարածքը կազմում է 5629,79 հա: Բարձրությունը ծովի մակարդակից 1700 մ է, հեռավորությունը մայրաքաղաքից՝ 232 կմ է, մարզկենտրոնից՝ 84 կմ, համայնքի կենտրոնից՝ 18 կմ: Բնակավայրում առկա է 164 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 741 որից՝ 400 արական, 341 իգական սեռի, աշխատանք փնտրող քաղաքացիների թիվը 270 /կին՝ 120/ :
5. **Հալիձոր** բնակավայրի տարածքը կազմում է 2776,74 հա: Բարձրությունը ծովի մակարդակից 1250 մ է, հեռավորությունը մայրաքաղաքից՝ 241 կմ է, մարզկենտրոնից՝ 62 կմ, համայնքի կենտրոնից՝ 4,5կմ: Բնակավայրում առկա է 5 բազմաբնակարան բնակելի շենք՝ 3 հարկանի (յուրաքանչյուր շենքում 2 բնակարան), 113 առանձնատուն: Բնակչության թիվը 612, որից՝ 299 արական, 313 իգական սեռի, աշխատանք փնտրող քաղաքացիների թիվը 206 /կին՝ 98 /, գրանցված գործազուրկներ՝ չկան:
6. **Սվաքանց** բնակավայրի տարածքը կազմում է 1620 հա: Բարձրությունը ծովի մակարդակից 1700 մ է, հեռավորությունը մայրաքաղաքից՝ 258 կմ է, մարզկենտրոնից՝ 51 կմ, համայնքի կենտրոնից՝ 22 կմ: Բնակավայրում առկա է 110 առանձնատուն: Բնակչության թիվը 146 ,որից՝ 64 արական, 82 իգական սեռի, աշխատանք փնտրող քաղաքացիների թիվը 80 /կին՝ 42 /, գրանցված գործազուրկներ՝ չկան:
7. **Տանձատափ** բնակավայրի տարածքը կազմում է 808,84 հա: Բարձրությունը ծովի մակարդակից 1400 մ է, հեռավորությունը մայրաքաղաքից՝ 258 կմ է, մարզկենտրոնից՝ 47 կմ, համայնքի կենտրոնից՝ 23 կմ: Բնակավայրում առկա է 42 առանձնատուն:

Բնակչության թիվը՝ 80 , որից՝ 33 արական, 47 իգական սեռի, աշխատանք փնտրող քաղաքացիների թիվը 14 /կին՝ 6 /, գրանցված գործազուրկներ՝ չկան:

8. **Քաշունի** բնակավայրի տարածքը կազմում է 857 հա: Բարձրությունը ծովի մակարդակից 1500 մ է, հեռավորությունը մայրաքաղաքից՝ 265 կմ է, մարզկենտրոնից՝ 41 կմ, համայնքի կենտրոնից՝ 28 կմ: Բնակավայրում առկա է 22 առանձնատուն: Բնակչության թիվը՝ 5 ,որից՝ 3 արական, 2 իգական սեռի:

Համայնքի ուր բնակավայրերից միայն Տաթևն ունի գլխավոր հատակագիծ:

Տաթև համայնքի տարածքը 26359,78 հա է /տես աղյուսակ 1/

Աղյուսակ 1

Հ/հ	Անվանումը	Տարածքը/հա/
1	Շինուհայր	5245,1
2	Տաթև	7627,12
3	Խոտ	1795,19
4	Հարժիս	5629,79
5	Հալիձոր	2776,74
6	Սվարանց	1620
7	Տանձատափ	808,84
8	Քաշունի	857
	Ընդամենը	26359,78

Համայնքում միջին հաշվով տարբեր կատեգորիաների հողատեսակներից տարեկան օտարվում է մոտ 1.5 հա հող: Տաթև համայնքում 1 քմ. հողի համար ըստ տարածագնահատման գոտիների գործում են հետևյալ սակագները.

- 14-րդ գոտի – 1221 դրամ
- 16-րդ գոտի – 314.8 դրամ
- 17-րդ գոտի- 336.6 դրամ
- 18-րդ գոտի- 217.8 դրամ
- 20-րդ գոտի -92.4 դրամ

Աղյուսակ 2

	2022թ.	2023թ.	2024թ.	2025թ.	2026թ.
Հողերի օտարում	2.0 հա	2.2 հա	2.2 հա	2.2 հա	2.2 հա
Բյուջետային մուտքեր	12.000.000 դրամ	12.520.000 դրամ	13.224.000 դրամ	13.780.000 դրամ	13.780.000 դրամ

Համաձայն ՀՀ Սյունիքի մարզպետարանի միջոցով ՀՀ ոստիկանության անձնագրային և վիզաների վարչության կողմից ստացված տեղեկատվության Տաթև համայնքում գրանցված է 5896 մարդ, որից կանայք՝ 2871, տղամարդիկ՝ 3025 /տես աղյուսակ 3/:

Աղյուսակ 3

Ծննդյան տարեթիվը	Բնակչության քանակը/%		Արական/%		Իգական/%	
2021	26	0,44	12	0,20	14	0,24
2020	36	0,61	22	0,37	14	0,24
2019	38	0,64	22	0,37	16	0,27
2018	72	1,22	36	0,61	36	0,61
2017	66	1,12	45	0,76	21	0,36
2016	68	1,15	45	0,76	23	0,39
2015	72	1,22	36	0,61	36	0,61
2014	65	1,10	32	0,54	33	0,56
2013	88	1,49	51	0,86	37	0,63
2012	80	1,36	42	0,71	38	0,64
2011	63	1,07	34	0,58	29	0,49
2010	65	1,10	41	0,70	24	0,41
2009	75	1,27	44	0,75	31	0,53
2008	54	0,92	30	0,51	24	0,41
2007	86	1,46	46	0,78	40	0,68
2006	52	0,88	28	0,47	24	0,41
2005	78	1,32	41	0,70	37	0,63
2004	75	1,27	35	0,59	40	0,68
2003	85	1,44	40	0,68	45	0,76
2002	87	1,48	43	0,73	44	0,75
2001	94	1,59	52	0,88	42	0,71
2000	86	1,46	38	0,64	48	0,81
1999	92	1,56	54	0,92	38	0,64
1998	96	1,63	58	0,98	38	0,64
1997	90	1,53	41	0,69	49	0,83
1996	93	1,58	38	0,64	55	0,93

1995	89	1,51	42	0,71	47	0,80
1994	114	1,93	51	0,86	63	1,07
1993	88	1,49	42	0,71	46	0,78
1992	112	1,90	57	0,97	55	0,93
1991	84	1,32	38	0,64	46	0,78
1990	125	2,12	57	0,97	68	1,15
1989	115	1,95	59	1	56	0,95
1988	117	1,98	61	1,03	56	0,95
1987	101	1,71	48	0,81	53	0,89
1986	99	1,68	43	0,73	56	0,95
1985	111	1,88	50	0,85	61	1,03
1984	83	1,41	39	0,66	44	0,75
1983	93	1,58	45	0,76	48	0,81
1982	97	1,64	44	0,75	53	0,90
1981	100	1,69	51	0,86	49	0,83
1980	90	1,53	43	0,73	47	0,80
1979	80	1,36	39	0,66	41	0,69
1978	83	1,41	39	0,66	44	0,75
1977	86	1,46	42	0,71	44	0,75
1976	107	1,81	53	0,90	54	0,92
1975	77	1,31	38	0,64	39	0,66
1974	82	1,39	41	0,70	41	0,70
1973	83	1,41	42	0,71	41	0,70
1972	101	1,71	54	0,92	47	0,80
1971	96	1,63	49	0,83	47	0,80
1970	74	1,26	39	0,66	35	0,59
1969	65	1,10	35	0,59	30	0,50
1968	73	1,23	38	0,64	35	0,59
1967	87	1,48	47	0,54	40	0,68
1966	90	1,52	51	0,86	39	0,59
1965	76	1,29	41	0,70	35	0,59
1964	72	1,22	38	0,64	34	0,58
1963	74	1,26	40	0,68	34	0,58
1962	79	1,34	38	0,64	41	0,70
1961	70	1,19	41	0,70	29	0,49
1960	69	1,17	38	0,64	31	0,53
1959	64	1,09	35	0,59	29	0,49
1958	56	0,95	29	0,49	27	0,46
1957	51	0,86	27	0,46	24	0,41
1956	47	0,80	28	0,47	19	0,32

1955	44	0,75	25	0,42	19	0,32
1954	40	0,68	23	0,39	17	0,29
1953	38	0,64	21	0,36	17	0,29
1952	36	0,61	17	0,29	19	0,32
1951	32	0,54	18	0,30	14	0,24
1950	30	0,51	16	0,27	14	0,24
1949	32	0,54	20	0,34	12	0,20
1948	25	0,42	16	0,27	9	0,15
1947	25	0,42	17	0,29	8	0,14
1946	23	0,39	14	0,24	9	0,15
1945	19	0,32	11	0,19	8	0,14
1944	16	0,27	8	0,14	8	0,14
1943	19	0,32	12	0,20	7	0,12
1942	20	0,34	11	0,19	9	0,15
1941	17	0,29	7	0,12	10	0,17
1940	21	0,36	8	0,14	13	0,22
1939	22	0,37	11	0,19	11	0,19
1938	16	0,27	8	0,14	8	0,14
1937	17	0,29	6	0,19	11	0,19
1936	16	0,27	7	0,12	9	0,15
1935	10	0,17	3	0,05	7	0,12
1934	9	0,15	2	0,03	7	0,12
1933	5	0,08	1	0,02	4	0,07
1932	6	0,1	1	0,02	5	0,08
1931	5	0,08	1	0,02	4	0,07
1930	3	0,05	1	0,02	2	0,03
1929	2	0,03	0	0,00	2	0,03
1928	1	0,02	0	0,00	1	0,02
1927	2	0,03	1	0,02	1	0,02
1926	3	0,05	1	0,02	2	0,03
1925	0	0,00	0	0,00	0	0,00
1924	0	0,00	0	0,00	0	0,00
1923	0	0,00	0	0,00	0	0,00
1922	0	0,00	0	0,00	0	0,00
1921	0	0,00	0	0,00	0	0,00
1920	0	0,00	0	0,00	0	0,00
1919	0	0,00	0	0,00	0	0,00
1918	0	0,00	0	0,00	0	0,00
1916	0	0,00	0	0,00	0	0,00
1915	0	0,00	0	0,00	0	0,00

1913	0	0,00	0	0,00	0	0,00
Ընդամենը	5896	100	3025	51,3	2871	48,7

Աղյուսակ 4-ում ներկայացված է համայնքի բնակչությունն ըստ բնակավայրերի.

Աղյուսակ 4

Ը/Ը	Բնակավայրի անվանումը	Բնակչություն 01.02.2022թ դրությամբ		
		ընդամենը	արական	իգական
1	Շինուհայր	2579	1326	1253
2	Խոտ	919	485	434
3	Տաթև	814	415	399
4	Հարժիս	741	400	341
5	Հալիձոր	612	299	313
6	Սվարանց	146	64	82
7	Տանձատափ	80	33	47
19	Քաշունի	5	3	2

2020 թվականին սանձագերծված պատերազմի հետևանքով Տաթև համայնքում ներկա դրությամբ բնակվում են Արցախի Հանրապետությունից տեղահանված 44 ընտանիք, 177 անձ:

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԸ

Տաթև համայնքի ղեկավարը և 15 անդամներից բաղկացած ավագանին ընտրվել են 2021 հոկտեմբերի 17-ին): Տաթև համայնքի համայնքապետարանի աշխատակազմը բաղկացած է 41 աշխատակցից:

Համայնքապետարանն ունի վարչական շենք, որը գտնվում է Տաթև համայնքի Շինուհայր գյուղի կենտրոնում: Շենքի ընդհանուր վիճակը այդքան էլ լավ չէ, աշխատակազմի համար պայմանները լավ են, կահավորանքի մի մասը նորացված է, մի մասը դեռևս 1980-ական թվականներից է: Համայնքապետարանը հագեցած է տեխնիկայով, սակայն այն բավարար չէ աշխատակազմի լիարժեք գործունեությունն ապահովելու համար: Համայնքապետարանի ամենամեծ սենյակը ծառայում է որպես քաղաքացիների սպասարկման գրասենյակ (քաղաքացիները սպասարկվում են մեկ պատուհանի սկզբունքով):

Համայնքի ղեկավարի վարձատրության չափը, համայնքի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատվել են համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 16-ի թիվ 63-Ա որոշմամբ (աղյուսակ 5):

Հ/Հ	ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ	ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓ Ը (սահմանվում է հասարիքային մեկ միավորի համար)	ՀԱՎԵԼԱՎՃ ԱՐԸ	Աշխատավարձի չափը
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՎ ՀԱՅԵՅՈՂԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
1.	Համայնքի ղեկավար	1	425000		425000
2.	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ	1	346000		346000
3.	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	326000		326000
4.	Համայնքի ղեկավարի խորհրդական	1	260000		260000
5.	Համայնքի ղեկավարի օգնական	1	220000		220000
	Ընդամենը	5			1577000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՎԱՐՉԱԿԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
6.	Վարչական ղեկավար Տաթև քնակավայրում	1	185000		185000
7.	Վարչական ղեկավար Խոփ քնակավայրում	1	185000		185000
8.	Վարչական ղեկավար Հարժիս քնակավայրում	1	185000		185000
9.	Վարչական ղեկավար Հալիձոր քնակավայրում	1	185000		185000
10.	Վարչական ղեկավար Սվարանց քնակավայրում	1	150000		150000
11.	Վարչական ղեկավար Տանձատրափ քնակավայրում	1	150000		150000
	Ընդամենը	6			1040000
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐ					
12.	Աշխատակազմի քարտուղար	1	336000		336000
13.	Գլխավոր մասնագետ	1	235000	23500	258500
14.	Գլխավոր մասնագետ	1	235000		235000
15.	Գլխավոր մասնագետ	1	235000		235000
16.	Առաջատար մասնագետ	1	165000	16500	181500
17.	Առաջատար մասնագետ	1	165000		165000
18.	Առաջատար մասնագետ	1	165000		165000
19.	Առաջատար մասնագետ	1	165000		165000

20.	Առաջադրար մասնագետ	1	165000		165000
21.	Առաջադրար մասնագետ	1	165000		165000
22.	Առաջին կարգի մասնագետ	1	140000	14000	154000
23.	Առաջին կարգի մասնագետ	1	140000		140000
24.	Առաջին կարգի մասնագետ	1	140000		140000
25.	Առաջին կարգի մասնագետ	1	140000	14000	154000
26.	Երկրորդ կարգի մասնագետ	1	125000		125000
27.	Երկրորդ կարգի մասնագետ	1	125000		125000
	Ընդամենը	14		68000	2909000
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԱՆՁՆԱԿԱԶՄ					
28.	Տնտեսվար	1	185000		185000
29.	Վարորդ	1	140000		140000
30.	Հավաքարար(Տաթևի համայնքապետարանում)	1	120000		120000
31.	Ակումբավար(Խոտ բնակավայրում)	1	105000		105000
32.	Ակումբավար-գրադարանավար(Քաշունի բնակավայրում)	1	100000		100000
33.	Ակումբավար-գրադարանավար(Տանձադափ բնակավայրում)	0.5	168000		84000
34.	Ակումբավար(Տաթև բնակավայրում)	0.5	130000		65000
35.	Ակումբավար(Հարժիս բնակավայրում)	0.5	130000		65000
36.	Ակումբավար(Հալիձոր բնակավայրում)	0.5	130000		65000
37.	Ակումբավար(Սվարանց բնակավայրում)	0.5	130000		65000
38.	Հավաքարար(Հալիձոր բնակավայրում)	0.5	186000		93000
39.	Հավաքարար(Տաթև բնակավայրում)	0.5	120000		60000
40.	Հավաքարար(Խոտ բնակավայրում)	0.5	120000		60000
41.	Հավաքարար(Հարժիս բնակավայրում)	0.5	120000		60000
	Ընդամենը	11.5			1267000
	ԸՆԴԱՄԵՆԸ աշխատակազմ	36.5			6793000

2. ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ-ՏԵՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

2021 թվականի հաշվետու տարում Տաթև համայնքի բյուջեով կանխատեսվել էր շուրջ 48 մլն 700 հազար դրամ բյուջետային եկամուտների ստացում, որի դիմաց փաստացի հավաքումը կազմել է 48208,4 հազար դրամ՝ ապահովելով կանխատեսված ցուցանիշի 99%-ը:

2022 թվականի Տաթև համայնքի բյուջեով եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 91520.5 հազար դրամ, որը 42820.5 հազար դրամով ավել է 2021թ նույն ցուցանիշից և 43312.2 հազար դրամով ավել է 2021 թվականի կատարողականից:

2022 թվականի եկամուտների ընդհանուր ծավալու սեփական եկամուտները կազմում են 91520.5 հազար դրամ:

Համայնքի 2022 թվականի բյուջեի ընթացիկ ծախսերի 23.8%-ը կամ 88525.0 հազար դրամը կազմում է աշխատավարձի ֆոնդը, ինչը կազմվել է հիմք ընդունելով Տաթև համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 16-ի N 63-Ա, N 69-Ա որոշումներով հաստատված հաստիքացուցակները:

Համայնքում բարձր է գործազրկության ցուցանիշը: Գործազրկության հիմնական պատճառներն են համայնքում աշխատատեղերի սակավությունը, տնտեսության զարգացման ոչ բավարար մակարդակը, ստվերային գործազրկությունը, մասնավոր հատվածում ոչ նորմավորված աշխատանքային պայմանները և ցածր աշխատավարձը: Տաթևում մեծ է հատկապես կանանց գործազրկությունը, քանի որ համայնքում հիմնական աշխատանքային ուղղվածությունը շինարարությունը են: Համայնքի բնակիչների սոցիալական պայմանները բարելավելու և սոցիալական խնդիրները լուծելու համար համայնքապետարանը անապահով խավերին ամեն տարի և պարբերաբար տրամադրել է տարբեր բնույթի սոցիալական օգնություններ: Դրանք եղել են դրամական միջոցների, սննդի փաթեթների, վառելափայտի, շինանյութի տեսքով: Բացի դրանից, համայնքապետարանը հանրության սոցիալական խնդիրների լուծման համար պարբերաբար միջնորդություններ է ներկայացրել պետական համապատասխան կառույցներին:

Տաթև համայնքի բնակչության սոցիալական իրավիճակի նկարագիր (տես աղյուսակ 6)

Աղյուսակ 6		
Հ/Հ		սառ 01.01.2022թ.
11	Կենսաթոշակառուներ /հաշմանդամ/, այդ թվում	744/319
21.1	1-ին խմբի հաշմանդամներ	19
11.2	2-րդ խմբի հաշմանդամներ	125
11.3	3-րդ խմբի հաշմանդամներ	153
11.4	75 տարեկան և բարձր կենսաթոշակառուներ	358
22	Աշխատանք փնտրող քաղաքացիներ /կին/, որից	1251/886
22.1	- զբաղված /կին/	138/92

22.2	- չգրադված /կին/	1113/794
23	Գրանցված գործագուրկներ (մարդ), որից /կին/	1122/803
	- բարձրագույն կրթությամբ	143/105
	- միջին մասնագիտական կրթությամբ	411/357
	- միջնակարգ կրթությամբ	427/285
34	«Նպաստ» համակարգում ընդգրկվածներ	177
	- ընտանիք, որից նպաստառու	177

Գյուղական բնակավայրերում մեծ է գյուղատնտեսության ոլորտում ինքնագրադվածների թիվը: Իսկ ընդհանուր առմամբ համայնքում գործագրկությունը կազմում է 17% /ոչ պաշտոնական տվյալներ/:

Տաթև համայնքում գործում են հանրային սննդի 8 օբյեկտ, ոգելից խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքով զբաղվող առևտրի 22 օբյեկտ:

Համայնքում գործում են նաև առողջապահական, էներգամատակարարման, կապի, հյուրանոցառեստորանային, հանրային սննդի և այլ ծառայություններ:

Աղյուսակ 7

<i>Գյուղատնտեսություն</i>			
1	<<Ռազմավարական զարգացման գործակալություն>> ՀԿ	Սյունիքի մարզ Տաթև համայնք	Տոհմային տավարաբուծություն և վաճառք
<i>Հացամթերք</i>			
1	<<Հացամթերքի արտադրություն>> ԱԶ	Սյունիքի մարզ Տաթև համայնք գ.Շինուհայր	Հացամթերքի արտադրություն
2	<<Հացամթերքի արտադրություն>> ԱԶ	Սյունիքի մարզ Տաթև համայնք գ.Շինուհայր	
3	<<Հացամթերքի արտադրություն>> ԱԶ	Սյունիքի մարզ Տաթև համայնք գ.Շինուհայր	
4	<<Հացամթերքի արտադրություն>> ԱԶ	Սյունիքի մարզ Տաթև համայնք գ.Հարժիս	

Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի օգոստոսի 14-ի «Հայաստանի Հանրապետության բնության հուշարձանների ցանկը հաստատելու մասին» թիվ 967-Ն որոշման համաձայն՝ համայնքի վարչական տարածքում առկա են թվով 9 բնության հուշարձաններ /տես աղյուսակ 8/

Աղյուսակ 8

Ը/Ը	Անվանումը /սկարագիրը	Տեղադիրքը
<i>Երկրաբանական հուշարձաններ</i>		
1	<<Բուշի ջրվեժ>>	Շինուհայրի այգիներում բարձրությունը 10 մետր
2	<<Օխնաձ ջուր>>	Շինուհայրի այգիներում
	<<Կոտանց աղբյուր>>	Շինուհայրի այգիներում
<i>Ջրակրկրաբանական հուշարձաններ</i>		
1	<<Սատանի կամուրջ>>	Սյունիքի մարզ, Որոտան գետի վրա, երկարությունը 30 մ է, լայնությունը՝ 50-60 մ:
2		
<i>Բնապատմական հուշարձաններ</i>		
1	<<Աղուն քերձ>>	Շինուհայր բնակավայրի արևելյան մասում բարձրությունը 200 մետր
	<<Արակի ձոր>>	Շինուհայր բնակավայրի արևելյան մասում բարձրությունը 400 մետր
	<<Շահունց ձոր>>	Շինուհայրի այգիներում
<i>Կենսաբանական հուշարձաններ</i>		
1	«Արթունարթ», որը միաժամանակ պահակակետ-դիտակետ է հանդիսացել, այսինքն՝ «Արթուն մարդ»,	Շինուհայրի վարչական տարածքում
	«Մշանց ձոր»,	Հին Շինուհայրից 2 կմ դեպի հարավ -արևմուտք

Համաձայն Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2322-Ն որոշման՝ Տաթև խոշորացված համայնքում առկա են պետական ցուցակում ընդգրկված մեծ թվով պատմության և մշակույթի անշարժ հուշարձաններ /տես աղյուսակ 9 /.

Աղյուսակ 9

Ը/Ը	Անվանումը	Քանակը
1	Եկեղեցի	21
2	Ամրոց	3
3	Հուշարձան, հուշակոթող, հուշաղբյուր, արձան	73
4	Խաչքար	108
5	Վանական համալիր	3
6	Մատուռ	5



ՏԱԹԵՎԻ ՎԱՆՔ

Տաթևի վանքը գտնվում է Հայաստանի հարավում՝ Սյունիքի մարզում, անվանում են «Հայկական Ճարտարապետության մարզարիտ»: Ճարտարապետական այս սրբազան հուշարձանը կառուցվել է միջնադարում Որոտան գետի աջ ափին նույնանուն Տաթև գյուղից ոչ հեռու:

Վանքը Երևանից հեռու է 315 կմ, իսկ Գորիս քաղաքից՝ 30 կմ: Կառուցվելով IX-XIII դդ., այն նվիրված է եղել Ս.Եվստաթեոսին: Այս սուրբը Թադևոս առաքյալի աշակերտն է եղել և նահատակվել է հանուն քրիստոնեական հավատքի:

Սկզբում վանական համալիրն իրենից ներկայացնում էր ընդամենը մեկ եկեղեցի, որը կառուցվել էր IX դարում: Այդ ժամանակ այնտեղ ընդամենը մի քանի վանական էր ապրում: XIII դարում Տաթևը դարձավ Սյունիքի եպիսկոպոսների նստավայրը: XIII դարի վերջից XV դարի կեսերը այստեղ նաև գործել է Տաթևի համալսարանը, որը միջնադարյան գիտության և փիլիսոփայության զարգացման կենտրոններից էր: Տարբեր ժամանակներում այն գլխավորել են Հ. Որոտնեցին և Գ. Տաթևացին, ինչպես նաև այդ ժամանակաշրջանի այլ նշանավոր գործիչներ:

Վանական համալիրի գլխավոր կառույցը Սբ. Պողոս-Պետրոսի եկեղեցին է, որը կառուցվել է Հովհաննես եպիսկոպոսի կողմից 895-906 թթ. հին եկեղեցու տեղում: Պողոս և Պետրոս առաքյալների մասունքները հանել էին վերջինիս պատերի միջից և տեղադրել նոր եկեղեցու պատերի մեջ:

Վանքի գլխավոր տեսարժան վայրը Գավազան ճոճվող սյունաշարն է: 8 մ բարձրությամբ քարե սյունը զարդարված է խաչքարով և կարող է ինքնուրույն թեքվել և վերադառնալ նախնական դրության:

Տեղի ճարտարապետական եզակի հուշարձաններից է 1087 թ. կառուցված Սբ. Աստվածածին եկեղեցին:

Սրբազան կառույցները շրջապատում են ծառայողական և բնակելի շինությունները, գանգակատունը, կամարակապ սեղանատունը և խոհանոցը, պահեստային տարածքները, որոնք կառուցվել են XVII-XVIII դարերում:

ՏԱԹԵՎԻ ՄԵԾ ԱՆԱՊԱՏ

Այս ճարտարապետական համալիրը նշանավոր կրոնական կենտրոն էր: Գտնվում է Որոտան գետի աջափնյա ձորում, Որոտանի և նրա Տաթև վտակի միախառնման վայրում: Անապատի ստեղծման առիթը նույն ձորում, դեպի հարավ գտնվող Հարանց անապատի կործանումն էր 1658 թ.-ի երկրաշարժից, որից շատ չանցած Հակոբ կաթողիկոսը որոշում է նոր մենաստան կառուցել և այստեղ տեղափոխել նախկին անապատի միաբանությունը: Տաթևի Մեծ անապատի շինարարությունը սկսվել է 1660 թ.-ին:

ՀԱԼԻՁՈՐԻ ՀԱՐԱՆԳ ԱՆԱՊԱՏ

Ուշ միջնադարյան հայկական ճարտարապետության Հարանց Անապատ համալիրը գտնվում է Հալիձոր գյուղի մոտ, Որոտան գետի աջ ափին: Հիմնադրել են Սաղմոսավանքի Սարգիս վարդապետը և Կիրակոս քահանա Տրապիզոնցին: Հիմնադրման ստույգ ժամանակը հայտնի չէ: Ենթադրվում է, որ կառուցվել է 1608-1613 թթ.: Անապատը գոյատևել է մինչև 1658 թ. երկրաշարժը, երբ Անապատի բոլոր շինությունները, բացի եկեղեցուց, կործանվել են, իսկ եկեղեցին էլ սողանքի պատճառով սահել-իջել է այժմյան տեղը: Երկրաշարժից երկու տարի անց միաբանությունը լքել է անապատը, տեղափոխվել այլ վայր և հիմնել Տաթևի Մեծ Անապատը: Ավելի ուշ՝ XVIII դ. սկզբին, Հալիձորի Հարանց Անապատը վերածնվել և կառուցապատվել է Տաթևի վանքի առաջնորդների շնորհիվ: Համալիրի նախնական հորինվածքից ոչինչ չի պահպանվել: XVIII դ. կեսերին կառուցված Անապատը հորինվածքով տարբերվում է նախնական կերպարից: Ներկայիս համալիրը բաղկացած է եկեղեցուց, գավիթ-սրահից, սեղանատնից, պարիսպների մնացորդներից: Թեև Հարանց Անապատը, որպես կրոնական, կրթական և մշակութային կենտրոն, գոյատևել է 50 տարուց պակաս՝ մինչև XVIII դ. կեսերը, սակայն մեծ դեր է ունեցել Հայաստանի կրթության, մշակութային զարթոնքի գործում:





Այն տրավերտիններից գոյացած բնական կամուրջ է, որը գտնվում է Սյունիքի մարզում՝ Որոտան գետի վրա: Երկարությունը 30 մ է, լայնությունը՝ 60 մ: Կամրջի շրջակայքում կան բազմաթիվ լեռնային աղբյուրներ, որոնց ջրերը գունավորել են ձորի պատերը վարդագույն, դեղին եւ կանաչ գույներով: Սատանի կամրջի վրայով է անցնում ԳորիսՏաթև ավտոճանապարհը: <<Սատանի կամուրջ>> անվան հետ կապված կան տարբեր վարկածներ: Այսպես, օրինակ, կա վարկած, որ ավելի քիչ ջուր է մտնում կամրջի տակ, քան դուրս է գալիս: Դա պայմանավորված է նրանով, որ վերելից հանքային ջրեր են կաթկթում:

Տաթև համայնքի վարչական տարածքում գործում են 6 միջնակարգ և 1 հիմնական դպրոցներ: Տաթև համայնի միջնակարգ դպրոցները հիմնականում վերազինված են, սակայն կա գույքի արդիականացման և նոր գույքի ձեռքբերման անհրաժեշտություն: Համայնքում գործում են նաև 1 երաժշտական դպրոց:

Համայնքային ենթակայությամբ գործում են 5 նախադպրոցական և 1 արտադպրոցական ուսումնական հաստատություններ /տես աղյուսակ 10/

Աղյուսակ 10

Ը/Ը	Հասարակության անվանումը	Ըստ նախագծի տեղերի թիվը	Փաստացի սանների թիվը	Աշխատողների թիվը
Հանրակրթական դպրոցներ				
1	«Շինուհայրի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	497	416	43
2	«Խոտի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	290	167	24
3	«Տաթևի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	368	51	21
4	«Հարժիսի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	190	84	21
5	«Հալիձորի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	185	62	23

6	«Սվարանցի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ	127	16	16
7	«Տանձատափի հիմնական դպրոց» ՊՈԱԿ	35	5	4
Նախադպրոցական ուսումնական հասարարություններ				
1	«Շինուհայրի ՆՈՒՀ» ՀՈԱԿ	180	92	12
2	«Խոտի ՆՈՒՀ» ՀՈԱԿ	90	40	4
3	«Հալիձորի ՆՈՒՀ» ՀՈԱԿ	30	20	4
4	«Տաթևի ՆՈՒՀ» ՀՈԱԿ	100	25	4
5	«Հարժիսի ՆՈՒՀ» ՀՈԱԿ	80	14	4
Արտադպրոցական ուսումնական հասարարություններ				
1	« Շինուհայրի երաժշտական դպրոց » ՀՈԱԿ	110	100	11

Տաթև համայնքում բնակչության բուժապասարկումն իրականացվում է համայնքում գործող առողջապահական հիմնարկների կողմից: Բժշկական հաստատությունների վերաբերյալ տեղեկատվությունը բերված է աղյուսակ 11-ում:

Աղյուսակ 11

Հ/Հ	Հաստատության անվանումը	Քանակը
I	<<Շինուհայրի առողջության առաջնային պահպանման կենտրոն>> ՊՈԱԿ	1
1	Բուժանձնակազմ որից՝	11
1.1	բժիշկներ	2
1.2	միջին բուժանձնակազմ	6
1.3	կրտսեր բուժանձնակազմ	1
1.4	այլ գործունեության անձնակազմ	2
2	Մահճակալների թիվ	0
3	Տրանսպորտային միջոցների քանակը	1
II	«Տաթևի առաջնային կենտրոն» ՊՈԱԿ	1
1	Բուժանձնակազմ, որից՝	9
1.1	բժիշկներ	1
1.2	միջին բուժանձնակազմ	5
1.3	կրտսեր բուժանձնակազմ	1
1.4	այլ գործունեության անձնակազմ	2

• Համայնքի սոցիալ-փնտեսական իրավիճակի վերաբերյալ տեղեկատվությունը տրամադրվել է Գորիսի սոցիալական ապահովության տարածքային բաժնի, Սոցիալական ծառայության Գորիսի տարածքային գործակալության, համապատասխան առողջապահական և ուսումնական հաստատությունների կողմից:

3. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄՆԵՐԸ

Տաթև խոշորացված համայնքի 2022 թվականի բյուջեն կազմվել է հիմնականում հաշվի առնելով գործող օրենսդրության պահանջները, խորհրդատվական բնույթ կրող նորմատիվները, ինչպես նաև կառուցվածքային և առանձնացված ստորաբաժանումներին, կազմակերպություններին վերապահված լիազորությունների լիարժեք և արդյունավետ իրականացման համար դրանց գործունեության առանձնահատկությունները:

Համայնքի բյուջեն կազմվել է եկամուտների և ծախսերի հաշվեկշռվածության սկզբունքի վրա:

Տաթև համայնքի 2022 թվականի բյուջեում եկամուտների ընդհանուր գումարը կազմում է 372034.3 հազար դրամ: Եկամուտների ընդհանուր ծավալի 91520.5 հազար դրամը կազմում են սեփական եկամուտները, իսկ 209463.7 հազար դրամը՝ պետական բյուջեից հատկացվելիք պաշտոնական դրամաշնորհներն են:

Ըստ առանձին հարկատեսակների պատկերը հետևյալն է.

1. Հարկեր և տուրքեր՝ 2022 թվականի բյուջեով նախատեսվել է 91520.5 հազար դրամ:

2. Հայաստանի Հանրապետության 2022 թվականի պետական բյուջեով ծրագրվել են 209463.7 դրամ պաշտոնական դրամաշնորհներ:

3. Համայնքի 2022 թվականի բյուջեի 50642.2 հազար դրամը բաժին է ընկնում այլ եկամուտներին:

Աղյուսակ 12

Եկամուտների տեսակ	2021 փաստացի		2022 հաստատված		2023 կանխատեսում	
	մլն. դրամ	% ընդ-ից	մլն. դրամ	% ընդ-ից	մլն. դրամ	% ընդ-ից
Ընդամենը, որից	228 003 617	88,6	259 925 827	70	338000000	70
Հարկային եկամուտներ և տուրքեր	29 292 627		40878.4	-	51000.0	-
Պաշտոնական դրամաշնորհներ	206 544 900	80,3	209 463 700	56.4	236000000	-
Այլ եկամուտներ	21 458 717	8,3	50 642 127	13.6	50000000	-

Տաթև խոշորացված համայնքի 2022 թվականի բյուջեի նախագծով ծախսերի ծավալը նախատեսվել է 372034.3 հազար դրամ: Ծախսերի ամբողջ ծավալի 300984.3 հազար դրամը բաժին է ընկնում ընթացիկ ծախսերին /վարչական բյուջե/, իսկ 71050.1 հազար դրամը կապիտալ ծախսերին /ֆոնդային բյուջե/:

ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ								
Տողի NN	Եկամտատեսակները	Հոդվածի NN	2021	2022	2023	2024	2025	2026
1	2	3	4	5	6	7	8	9
1000	ԸՆԴԱՄԵՆԸ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ		291 396 275	308 679 000	336000 000	3690000 00	411700000 0	440000000
1100	1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	7100	29 292 627	40878.4	51000.0	65000.0	76200.0	85600.0
1110	1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից	7131	9 984 868	17158.0	25000.0	32000.0	39000.0	45000.0
1120	1.2 Գույքային հարկեր այլ գույքից	7136	18 107 759	22000.0	24000.0	30000.0	34000.0	37000.0
1130	1.3 Տեղական տուրքեր	7145	1 200 000	1720.0	2000.0	3000.0	3200.0	3600.0
1150	1.4 Պետական տուրքեր	7146	-	-	-	-	-	-
1200	2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ	7300	206 544 900	217158.4	226000 000	235000.0	258000.0	269000.0
1300	3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	7400	21 458 717	50642.1	59000.0	69000.0	77500.0	85900.0
1330	3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ	7415	5 546 975	16230.1	20000.0	25000.0	29000.0	33000.0
1340	3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից	7421	-	-	-	-	-	-
1350	3.5 Վարչական զանձումներ	7422	7 320 659	26312.0	30000.0	35000.0	39000.0	43000.0
1360	3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից	7431	8 591 083	8000.0	9000.0 00	9000.0	9500.0	9900.0
1370	3.7 Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	7441	-	-	-	-	-	-
1380	3.8 Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ	7442	-	-	-	-	-	-
1390	3.9 Այլ եկամուտներ	7451	6 948 551	x	x	x	x	x

*) Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե հատկացվող գումարը չի մտնում բյուջետային ընդհանուր եկամուտների մեջ

4. ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ ԵՎ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Համայնքի կայուն զարգացման համար հիմնական խոչընդոտներ են մայրաքաղաքից հեռու գտնվելը, հիմնական շուկաներին դժվար հասանելի լինելը:

Զարգացման խոչընդոտներ կարելի է համարել նաև.

- գործազրկության բարձր մակարդակը, սոցիալապես անապահով և ծայրահեղ աղքատ բնակչության բարձր տոկոսը, ցածր աշխատավարձերի առկայությունը,
- բազմաբնակարան շենքերի տանիքների վատթար վիճակը,
- կոյուղագծերի և ոռոգման ջրի համակարգի վատթար վիճակը,
- գյուղմթերքների իրացման և վերամշակման հնարավորությունների բացակայությունը,
- գյուղատնտեսական աշխատանքներ իրականացնելու համար ժամանակակից տեխնիկայի բացակայությունը:

Նշված հիմնահարցերի լուծման համար առկա դժվարությունները կապված են հիմնականում համայնքի եկամուտների հետ: Համայնքը չունի անհրաժեշտ եկամուտներ՝ իր առջև դրված հիմնահարցերը միանգամից լուծելու համար:

ՀԱՄԱՅՆՔԻ ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐԻ, ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐԻ (ՈՒԹՀՍ) ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

<i>S- Ուժեղ կողմեր</i>	<i>W- Թույլ կողմեր</i>
• Կրթական, առողջապահական հիմնարկների առկայություն • Հարուստ պատմամշակութային ժառանգություն • Բնական հուշարձանների առկայություն • Բանիմաց աշխատուժ, մարդկային ինտելեկտուալ ռեսուրս • Համայնքապետարանի զարգացած տեղեկատվական համակարգի և մասնավորապես՝ Քաղաքացիների սպասարկման գրասենյակի գործունեության շնորհիվ առավելագույնս կազմակերպված է ազգաբնակչության սպասարկումը • Տաթևի վանքն ու <<Տաթևեր>> ճոպանուղին	• Մայրաքաղաքից հեռու գտնվելը • ՏԻՄ-բնակչություն թույլ կապը • Համայնքում գործազրկության կամ թերզբաղվածության բարձր մակարդակ • Համայնքում սոցիալական ծանր վիճակում գտնվող բնակչություն (աղքատության շեմից ցածր գտնվող բնակչություն) • Ոչ բարվոք վիճակում գտնվող ենթակառուցվածքներ (ճանապարհ, տրանսպորտբացակայություն, հեռահաղորդակցություն, ոռոգման ներհամայնքային համակարգ և այլն), • Վերջին 20 տարիներին համայնքում բնակարանային շինարարության բնագավառում պետական և համայնքային միջոցներ չեն հատկացվում • Արտագնա աշխատանքի մեկնողների մեծ թիվ

	• Երիտասարդների մեծ արտահոսք դեպի մայրաքաղաք կամ արտերկիր • Համայնքում տուրիզմի զարգացմանը նպաստող ժամանակակից ենթակառույցների բացակայություն • Համայնքում վթարային շենքերի առկայություն: • Վերազինման կարիք ունի համայնքապետարանի և նրա ենթակա կառույցների նյութատեխնիկական բազան: • Աշխատուժի առաջարկը շարունակում է մնալ անհամեմատ մեծ՝ ձեռնարկությունների պահանջարկից: • Շարունակում է բաց մնալ երիտասարդների և մեծահասակների ժամանցի կազմակերպման հիմնախնդիրը: • Նախորդ տարիների ծառահատումների պատճառով ներկայումս անտառապատ տարածքների վերականգնման խնդիր կա
Օ - Հնարավորություններ	T- Սպառնալիքներ
• Համայնքի աշխարհագրական դիրք՝ գտնվում է միջպետական Մ2 և Մ17 ճամապարհների վրա, • Մեղմ կլիմա, բերրի հողեր, ջրի աղբյուր • Համայնքի ակտիվ ընդգրկվածությունը պետական/միջազգային ծրագրերում • Նպատակային ծրագրեր իրականացնելու համար առկա ֆինանսական ռեսուրսներ համայնքի բյուջեում (համաֆինանսավորման սկզբունքով) • Համայնքում զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող վայրեր	• Համայնքում գյուղատնտեսական արտադրանքի սպառման և արտահանման համար սակավ հնարավորություններ • Բնական տարերային աղետների հնարավոր պատճառած վնասները (երկրաշարժ, հեղեղումներ, կարկտահարություն, սողանքների առաջացում) • Հնարավոր պատերազմական իրավիճակի առկայություն՝ բնակավայրերի մեծ մասը սահմանամերձ են • Ջրահեռացման ներհամայնքային համակարգը շարունակում է մնալ

	մաշված, վտանգ ստեղծելով վթարային իրադրությունների:
--	--

5. ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆԱՎՈՐՈՒՄ

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՏԵՍԼԱԿԱՆ

Համայնքի հնգամյա զարգացման ծրագրի ռազմավարությունն է հետևողականորեն բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական, մշակութային և հանգստի պայմանները, համայնքը դարձնել մաքուր և բարեկարգ բնակավայր:

Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների համատեղ գործունեությունը, ինչպես նաև համագործակցությունը պետական կառավարման մարմինների և դոնոր կազմակերպությունների հետ:

Համայնքի կայուն զարգացման ցուցանիշներն են՝

- Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով),
- Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով,
- Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով:

Ցուցանիշների արժեքները հինգ տարիների համար ներկայացված է աղյուսակ 13-ում:

Աղյուսակ 13

Հ/Հ	Ցուցանիշները	2022	2023	2024	2025	2026
1.	Աղքատության շեմից ցածր գտնվող ընտանիքների հարաբերությունը համայնքի ընտանիքների ընդհանուր թվին (արտահայտված տոկոսով)	30%	29%	28%	27%	26%

2.	Համայնքի սեփական եկամուտների տարեկան աճ, արտահայտված տոկոսով	38%	5%	5%	5%	5%
3.	Համայնքում գրանցված բնակիչների թվի փոփոխությունը (չպայմանավորված բնական աճով) նախորդ տարվա համեմատ, արտահայտված տոկոսով	33%	1%	1%	2%	2%

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐ

Առաջիկա 5 տարիներին համայնքի հիմնական նպատակներն են՝

- Բազմաբնակարան շենքերի տանիքների լայնածավալ հիմնանորոգումը,
- ջրահեռացման և ոռոգման ցանցերի հիմնանորոգումը,
- ներհամայնքային ճանապարհների և բակային տարածքների համատարած ասֆալտապատման աշխատանքների շարունակումը,
- ներհամայնքային երթևեկության հիմնական նշանների, բանուկ խաչմերուկներում՝ լուսակիիների վերականգնումը,
- մանկապարտեզների վերանորոգման աշխատանքների իրականացումը,
- նոր մարզադպրոցի կառուցումը,
- մասնագիտական ուսուցման և վերապատրաստման համակարգի բարելավումը, համապատասխանեցումը աշխատաշուկայի պահանջներին, մասնավորապես տեղեկատվական տեխնոլոգիաների ուղղությամբ,
- նոր ժամանակակից խաղահրապարակների կառուցումը և վերանորոգումը,
- հաշմանդամների տեղաշարժի համար թեք հարթակների կառուցումը՝ ինչպես հասարակական վայրերում, այնպես էլ բազմաբնակարան որոշ շենքերում,
- հասարակական կազմակերպությունների հետ համագործակցությամբ սոցիալական պլանավորման քաղաքականության մշակումը,
- զբոսաշրջության զարգացումը, մասնավորապես պատմաճարտարապետական էքսկուրսիաների, էկոտուրիզմի, ագրոտուրիզմի, էքստրեմալ տուրիզմի ուղղություններով,
- գյուղատնտեսության զարգացումը, մասնավորապես ինտենսիվ այգեգործության, օրգանիկ և բարձրարժեք կուլտուրաների մշակման ուղղությամբ,
- գյուղմթերքի վերամշակման, այլ փոքր ու միջին արտադրությունների զարգացում,
- հանգստի գոտիների, հյուրանոցային, օթևանատնային ծառայությունների զարգացում,
- փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման համար պայմանների ապահովումը՝ աշխատատեղերի ստեղծման նպատակով, ներդրումների ներգրավման համար բարենպաստ պայմանների ապահովումը:

Նշված նպատակներն իրականացնելուն ուղղված ծրագրերի համար կազմվել են անձնագրեր, որում առավել մանրամասն ներկայացված են նախատեսվող աշխատանքներն ու միջոցառումները:

ՀԱՄԱՅՆՔԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ԾՐԱԳՐԻ ԱՆՁՆԱԳԻՐ ԹԻՎ 1

« Ոռոգման ջրի ցանցի կառուցում և ջրամբարի վերանորոգում Հալիձոր գյուղում »

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Լուծել բնակիչների սանիտարական և կենսական անհրաժեշտության հարցերը						
Ծրագրի անմիջական նպատակ՝ Համայնքում գյուղատնտեսության կարևորագույն խնդիրներից մեկի լուծում և գյուղատնտեսության զարգացում	Ոռոգվող հողափարածությունները						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (հա)				
		2021	2022	2023	2024	2025	2026
		0.0	10.0	12.0	15.0	20.0	25.0
Ծրագրի միջանկյալ արդյունքներ Գյուղատնտեսության զարգացում և ոռոգման ջրի կորուստների կրճատում	1. Գյուղատնտեսության զարգացում						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (%)				
		2021	2022	2023	2024	2025	2026
		30	30	35	45	50	65
	2. Ոռոգման ջրի կորուստներ						
	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ (%)				
		2021	2022	2023	2024	2025	2026
		65	65	50	40	30	15
Ծրագրի հիմնական գործողությունները	1. Ծրագիրը իրականացնող դոնոր կազմակերպ. փնտրում 2. Համայնքի ներդրում 3. Պայմանագրի կնքում 4. Աշխատանքների կատարում						
Ծրագրի բյուջեն	115000.0						
Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ այլ ռեսուրսներ							
Ծրագրի հիմնական ռիսկերը	Տարերային աղետները						

Ծրագրի հիմնական շահառուները	Գյուղի բնակիչները
Ծրագրի սկիզբ և ավարտ	2022-2023թթ.
Ծրագրի համառոտ նկարագրություն	Հալիձոր բնակավայրի այգիները ոռոգման ջրի բացակայության հետևանքով վերածվել են ջրովի վարելահողերի, որտեղ հիմնականում մշակվում է հացահատիկ: Վերջին տարիներին գյուղում կառուցված ոռոգման փակ խողովակաշարից նախատեսվում է ոռոգման ջուրը հասցնել այդ վարելահողերին, որը հնարավորություն կտա հիմնել նոր այգիներ կամ տնկարքեր:

Ծ Ր Ա Գ Ր Ի Ա Ն Ձ Ն Ա Գ Ի Ր N2

« Արևային ֆոտովոլտային կայանների տեղադրում »

Պարտադիր խնդիր, որի լուծմանն է միտված ծրագիրը	Էներգախնայողություն, շրջակա միջավայրի պաշտպանություն						
Ծրագրի անմիջական նպատակ՝ Համայնքի մանկապարտեզների, լուսավորության ցանցի էլ. Էներգիայի ծախսերի տնտեսում	Ցուցանիշներ	Ելակետային արժեք	Թիրախային արժեքներ հազար դրամ				
		2021	2022	2023	2024	2025	2026
			106000.0				
Ծրագրի միջանկյալ արդյունքներ էլ. Էներգիայի և ջեռու ման ծախսերի տնտեսում :	1. Էլ. Էներգիայի ծախսերի խնայողություն						
